

Ատանա՛հ հին եւ պատմական քաղաք... Եթէ յունական աւանդույթները վստահութեան արժանի կարելի է համարել, այս քաղաքը, «Երկինք»-ի եւ «Երկիր»-ի գաւակներուն «Աթանա»-ի եւ «Սարոս»-ի կողմէ հիմնուած է, եւ այս երկու եղբայրներէն մէկը իր անունը քաղաքին եւ միւսը անոր թովէն անցնող գետին տուած է:

Ատանայի նահանգը բովանդակող հողամասը հին ատեն Կիլիկիա կը կոչուէր: Այս անունն ալ հին դարերու հոն գաղթած փիւնիկեան գաղութին յառաջապահ «Կիլիկի» կամ «Կելքիս» անունակոչման անունաւ է: Այս երկրին մէջ յոյներ, թուրքեր, փիւնիկեցիներ, արաբներ, թուրքմէներ եւ անշուշտ հայեր եւ ուրիշ ազգութիւններ բնակած են եւ ալ կը բնակին:

Կիլիկիա բնական սահմաններով շրջապատուած երկիր մըն է: Չայն հիւսիսէն քառասուն լեռներ, արեւելքէն Ամանոսեան լեռներ (Յայ Լեռ) եւ հարաւէն Միջերկրական ծովը կը շրջապատեն:

Այս երկիրը ատեն մը Ատրեստանի, յետոյ Մեծ Աղեքսանդրի, եւ աւելի յետոյ հռոմէացիներու իշխանութեան տակ անցաւ: Հռոմէացիները երկիրը գործածեցին իբրեւ կեդրոնատեղի իրենց արեւելեան բանակին: Կիլիկիոյ նշանաւոր եւ իշխատակելի քաղաքներէն մէկն է Տարսուսը, Պոզոս առաքեալի ծննդավայրը:

Քրիստոսի ապրած ժամանակամիջոցին, Տարսուսը հեթանոսական փիլիսոփայութեան կեդրոն մըն էր, եւ Ստոյիկեան փիլիսոփայ Կրիստոսի պատմութեան բանաստեղծ Արաթոս կիլիկեցի էին:

Ատանա քաղաքը Տարսուսէն քառասուն քիլոմետր դեպի արեւելք, Սարոս կամ Սեյիոս գետի ափին վրայ հաստատուած է: Այս գետին վրայ շինուած է կամուրջ մը, 24 կամարներով, 310 մետր երկարութեամբ: Այս կամուրջը շինուած է Բ. դարուն հռոմէացի Յատրիան կայսրին եւ 2. դարուն սորոգուած Յուստինիանոս կայսրին կողմէ: Ներկայիս 24 կամարներէն մնացած են միայն 14-ը: Ծառայած էր եւ կը շարունակէ ծառայել, դարերէ ի վեր իբրեւ միակ անցքը ճամբորդներուն դեպի Սուրիա եւ Պաղեստին:

Սակայն այս դարու սկիզբը կառուցուած է նոր կամուրջ մը, 16 քիլոմետր դեպի հիւսիս, Սիհուսի քրամբարը հակակշռող:

Ատանայի մէջ կայ նաեւ պատմական նշանաւոր աշտարակ ժամացոյցը, գոր բարձրացուցած էին 1880-1882-ի միջեւ, ճարտարապետութեամբ Գրիգոր Աղա Պոպիկեանի եւ Գասպար Աղա Աւագեանի:

Կայ նաեւ հին եւ հոյակապ յունական եկեղեցի մը, Ռամագանեան կոչուած իշխանութիւններու կողմէ մզկիթի վերածուած, եւ Ուլու ճամի (Մեծ Մզկիթ) կոչուած է: Այս շէնքին դուռը եւ իբր միակարգ գործածուած գանգակատունը շինուած են ութանկիւն եւ կարմիր մարմարիոնէ, որ գանգակ գեղեցիկ եւ գրուիչ կը հանդիսանայ:

Մեծնուկեան Տուրքիի Պեյի 1038-ին եւ անոր յաջորդ Ալիպախանի 1064-ի Յայաստանի մէջ գործարած բռնութեանց եւ հալածանքներու պատճառով հայ իշխանները եւ ժողովուրդը իրենց երկիրը լքելով ապաստանած են Տարսուս լեռներուն մէջ, ուր սկսած է հայոց Ռուբինեան իշխանութիւնը, որ տեսած է 295 տարի:

Կիլիկեան հայ իշխաններն ու թագաւորները, զիրենց շրջապատող թշնամի ցեղերու եւ իշխանութեանց հետ շուրջ 3 դար պայքարելէ ետք, 1345-ին Եգիպտոսի սուլթան Աշրաֆ Շապան Կիլիկեան գրաւած եւ հայկական իշխանութեան վերջ տուած է:

Այս երկրամասը ատեն մը Պոզ Օղլու հանի գաւակներու Ռամագանեան Պեյերու կողմէ կառավարուելէ ետք, թուրք սուլթաններէ նուաճեցաւ, եւ յետոյ Եգիպտոսեան եւ թրքական սուլթաններու միջեւ կռուականորդ եղաւ:

Վերջապէս, 13 Փետրուար 1841-ին Եգիպտոսի Իպրահիմ փառչիլի հետ կնքուած դաշնագրի տրամադրութեան համաձայն, Ատանա Ռուբինոյ ձգուեցաւ եւ այն թուականէն ի վեր կը կառավարուի իբրեւ թրքական նահանգ մը:

Ատանայի նահանգին տարածութիւնը 1909-ին եղած է 24,000 քառ. քիլոմետր եւ կը բովանդակէր 5 սանճաք, 12 քազա եւ 1629 գիւղեր, որոնք ու-

**ԱՏԱՆԱՑԻ ԱՊԷՏՔ**

**1909-2009**

**Զօն**  
Մեր բոլոր մարտիրոսներուն,  
Որոնք ինկան իրենց հաւատքին համար  
Եւ  
Բոլոր վերապրողներուն,  
Որոնք այս հաւատքի ջախջ միշտ վառ  
կը պահեն...:

նէին շուրջ 440.000 բնակչութիւն: Այս բնակչութեան շուրջ 300.000-ը թուրք, թիւրքմէն, չերքեզ, աֆղան եւ եւրիւքներ էին, իսկ ընդհանուր քրիստոնեաներու թիւը կը հաշուուէր իբր 140.000, որոնք էին՝ հայեր, յոյներ, ասորիներ եւ քաղդեացիներ:

Ատանա քաղաքը կառուցուած է բարեբեր դաշտի մը վրայ, գոր կը կոչէն նաեւ Չուքուր Օվա: Այս դաշտը կ'ոռոգէն չորս նշանաւոր գետեր, գայն դարձնելով այնքան պտղաբեր: Այս գետերը արեւմուտքէն դեպի արեւելք կարգաւ կը կոչուին Կալէկաղնոս «Կեղե Գո», Կիւղնոս «Պերտան», Սիհուս «Սարոս» եւ Ճիհան «Պիւրամոս»: Առաջինը Սելեւկիոյ, երկրորդը Տարսուսի, երրորդը Ատանայի եւ չորրորդը Միսիսի մօտէն անցնելով կը թափին Միջերկրական ծով:

Չուքուր Օվա կոչուած Կիլիկիան այս դաշտը, շատ բարեբեր է եւ կ'արտադրէ բամբակ, ցորեն, գարի, բրինձ, նարինջ, լեմոն, խաղող եւ ուրիշ շատ մը բերքեր, որոնք արտաքին շուկաներու վրայ են եւ կը սպառին:

Մասնաւորապէս Ատանա Մերսիսի հետ երկաթուղիով կապուած ըլլալով է ծովու ճամբով ալ Պոլսոյ հետ յարաբերութիւններ ունենալով, ունի բացառիկ կարեւորութիւն ամբարական տեսակետով:

Իբրեւ՝ Ատանայի նահանգին կարեւոր քաղաքներէն եւ աստիճանի կարելի է յիշել Սիս, Հաճըն, Հասան Պեյլի, Օսմանիյէ, Տերթ Տօլ, Ատը Եաման, Սիսիս, Տարսոս, Մերսիս, եւայլն:

1909-ին Ատանայի բնակչութիւնը կը հաշուուէր 66.000, որուն 25.000-ը թուրք, 15.000 ֆելլախ, 22.000 հայ (20.000 հայ առաքելական, 1500-ը հայ աւետարանական եւ 500-ը հայ կաթողիկէ) 2000-ը յոյն, 1000-ը ասորի, 600-ը սուրիացի եւ 400-ը գաղղեացի:

Ամէն տարի գարնան, Ռուբինոյ տարբեր նահանգներէն շուրջ 40.000-50.000 մշակներ եւ դաշտի աշխատուորներ կու գային գործելու համար: Ահա այս պատճառաւ էր, որ 1909-ին Ապրիլի 1-ին պատահած ջարդի ատեն Ատանայի եւ շրջակայից մէջ 100.000-էն աւելի հայ ժողովուրդ կը գտնուէր եւ կորուստն ալ նոյն համեմատութեամբ մեծ եղաւ, վնասելով նաեւ ուրիշ նահանգներու հայ բնակչութեան:

Ատանայի հայութիւնը նահապետական կեանք մը կ'ապրէր: Բազմաճում գերդաստաններ, մէկ յարկի տակ կ'ապրէին իրենց ամուսնացած գաւակներով եւ թոռներով: Այդ բազմաճումը ընտանիքին նահապետը կ'ունենար բացարձակ իշխանութիւն: Ամուսնութիւնները կը կատարուէին ծնողներու կարգադրութեամբ, իսկ երկու սեռերու անհատներու արժանիքի չափանիշն էր անոնց պատիւն ու պատուանկութիւնը:

Ատանայի հայերուն բնակարանները կը բարկանային մէկ կամ երկու յարկերէ, որոնց կողքին կը գտնուէին գոմերը, ուր կը պահուէին ընտանի կենդանիներ, որոնք կը ծառայէին իբրեւ փոխարումիջոց:

Հայկական տուններու տախտակամածները, ծածկուած կ'ըլլային ձեռագործ գորգերով: Գլխաւոր սենեակի պատերուն շարուած կ'ըլլային բամբակէ բարձր, հիւրերը, ընտանիքի անդամները կը նստէին բուրդէ բազմոցներու վրայ, զարգարուած հայ կանանց գեղակները ձեռագործներով:

Մինչեւ 20-րդ դարու սկիզբը, հայ կանայք կը հագուէին երկար շրջագգեստներ, ոտքերը հասնող, իսկ իրենց գլուխներն ու մարմինները կը ծածկէին մասնաւոր քողերով, որոնք «գար» կը կոչուէին: Այրերը կը հագուէին լայն, ծունկէն վար երկարող շրջագգեստներ, որոնք «անդարի» կը կոչուէին: Անոնք կը պատրաստուէին առ հասարակ սեւ կտաւէ:

Պատմութիւնը ցոյց կու տայ, որ Ատանայի հայութիւնը ունեցած է հարուստ կրօնական եւ

կրթական կեանք: Երեսնի ազգային Մատենադարանի մէջ, գոյութիւն ունի 1207 թուակիր ձեռագիր մը, ուր արձանագրուած է Ատանայի մէջ գրուած ըլլալը: Այս մատենը պատկանած է Սուրբ Կոյս եկեղեցոյ: Անկլա մէկն է այն անհամար ձեռագիրներէն, որոնք իրաջեղով փրկուած են թրքական խճճութիւններէն:

Այդ թուականներուն Ատանա ուներ 18 մզկիթներ, 8 եկեղեցիներ, որոնցմէ 2-ը կը պատկանէին Հայաստանեայց եկեղեցոյ համայնքին, մէկը՝ հայ աւետարանական եւ միւսը՝ հայ կաթողիկէ համայնքներուն: Կային նաեւ յոյն, ասորի եւ քաղդեական մէկ մէկ եկեղեցիներ ալ:

Հայ համայնքը ուներ Աբգարեան եւ Աշխենեան վարժարանները:

1 Ապրիլ 1909 թուականը, որ Չորեքշաբթի օր մըն էր, Ատանայի համար ողբերգական եղաւ: Այն՝ տխուր յիշատակներուն մէջ միշտ պիտի յիշուի եւ մարդկութեան ամօթ եւ նախատինջ պիտի բերէ առ յաւեւ:

Այդ օրը ատեղութեան եւ թշնամանքի, կործանման եւ անբաժնութեան, ջարդի ու կոխի, կողոպուտի եւ յափշտակութեան, սարսափի եւ բարբարոսութեան օրն էր: Քաղաքին քրիստոնեայ բնակիչները, ըստ սովորութեան, աշխատելու համար այգիներ եւ ագարակներ գացած էին, եւ ուրիշ մաս մըն ալ իրենց խանութներն ու վաճառատուները բանալու համար շուկայ իջած էին: Յանկած կը նկատեն, որ հետզհետէ փողոցներու մէջ կը շատանա սպառնալից դէմքով անծանօթ ճերմակ փաթեթաւորներով մարդոց խումբեր, ինչպէս թուրք, քիւրտ, չերքեզ, գաղթականներ, թիւրքմէներ..., որոնք զինուած՝ քիւրդով, սուրերով, կացիներով, ուրագներով, կը շրջին շուկաներուն մէջ:

Այս անակնկալ կացութեան առջեւ սարսափած, ամէն քրիստոնեայ խանութը կը գոցէ, կը վերադառնայ իր տունը:

Ազգային առաջնորդարանին մէջ, անմիջապէս ժողով մը կը գումարուի քրիստոնեայ կրօնապետներով ու երեսիներով, ապա պատուիրակութիւն մը կ'երթայ Վալի ճէլէթ պէլիի մօտ, վրասագաւոր կացութեան դէմ անմիջական նախազուլուծութիւններ խնդրելով: Կուսակալը կը յորդորէ թէ վտանգ չկայ, եւ թէ ամէն ոք պէտք է բանալ իր խանութը...:

Շուկաներուն մէջ, հետզհետէ, ջարդարար բազմութիւններ կը խռնուին եւ զինավաճառներու խանութները կը զբաղին թուրքերուն գէնք բաժնելով: Մէկ-երկու քրիստոնեայ զինավաճառներու խանութներուն փեղկերը կը խորտակուին ու զինամթերքը թուրքերու կողմէ յաշվտակութեան կը տրուի...:

Պահ մը կը տեսնուին շրջող ոստիկանական խումբեր, բայց շուտով անոնք ալ ցրուելով կը խանութին խուժանին...:

Նախ ջարդարար խուժանը կը յարձակի քաղաքի պանդոկներուն վրայ, ուր կը բնակէին դուրսէն եկած հայ վաճառական եւ արհեստաւոր մարդիկ: Նախ կը մտնեն Աճմ խանը, եւ ներկաներուն կեանքը ինչպէս խոստումներով եւ հոն գտնուող 60 հայ պանդոկատներուն գէնքերը հաւաքելէ ետք, բոլորը մէկ շարքով կը մորթեն: Ահա այս կերպով, Ապրիլի 1-ին, Չորեքշաբթի օրը, ըստ թրքաց՝ ժամը 4:30-ին, հրապարակաւ ընդհանուր ջարդ, կողոպուտ եւ հրդեհ կը սկսի, շարունակուելով 3 օր: Նախ խանութներուն դուռներն ու փեղկերը կտրուելով դրամ եւ ապրանք կը կողոպտեն:

Այս կողոպուտը ժամանակ չի տար անմիջապէս արձակելու տուներու վրայ: Սակայն, երկրորդ օրը, խուժանը յարձակելով տուներուն վրայ, կը կողոպտէ եւ կը հրդեհէ: Այս օրերուն քաղաքի քրիստոնեայ բնակչութիւնը կ'ապաստանի քաղաքի կեդրոնին մէջ գտնուող եկեղեցիներու եւ դպրոցներու, ինչպէս նաեւ օտար հաստատութեանց մէջ:

Խումբ մը հայ երիտասարդներ, որոնք կը համրուէին 173 հոգի 30.000-նոց խուժանին դէմ, անծնապաշտպանութեան ընելու ջանքով քրիստոնեայ տուններուն դէմ ուղղուած յարձակումներուն դիմարդէ փորձեցին: Թէեւ այս պաշտպանութիւնը տկար եւ անկանոն էր, սակայն անոնք կրցան փրկել քաղաքի կեդրոնական մասը, ու այդ ձեւով պատեհութիւնը ընծայեցին, որ շրջաններէն հոն փախչին եւ ջարդուէն փրկուին: Դժբախտաբար, այս կեդրոնական շրջանէն դուրս մնացած հայերը, ասորիներն ու յոյները ջարդուեցան: Չարդն ու անբաժնութիւնը տարածուեցաւ մինչեւ իսկ այգետաններուն ամառանոց տուները, դաշտի ագարակները եւ շրջակայ գիւղերը, եւ այդ տեղերը գտնուող քրիստոնեաները անգթօրէն կոտորուեցան, անոնց ապրանքներն ու հարստութիւնները կողոպտուեցան, տուններն ու ագարակները հրդեհուեցան...: Այս մթնոլորտը շարունակուեցաւ մինչեւ 8 Ապրիլ 1909:

Ատանայի թուրքերը առաջին ջարդով գոհացած էին եւ երկրորդ ու աւելի մեծ եւ անաւոր ջարդ մը կազմակերպած էին: Մէկ կողմէ քրիստոնեայ բնակչութեան կ'ապահովեցնէին թէ՛ ալ վտանգ չկայ եւ խոստումներ ու երդումներ կ'ընէին այդ մասին, միւս կողմէ սուտ հեռագիրներով Պոլսոյ կառավարութիւնը կը խափէին ու կը մոլորեցնէին:

Առաջին ջարդին ատեն, շրջակայ գիւղերու եւ ագարակներու մէջ շատ հայեր մնացած էին: Եթէ որեւէ կերպով վերապրողներ եղան, կառավարութիւնը զանոնք իբրեւ պատերազմական գերի կը բերէ եւ վիրաւորները Աշխենեան եւ առողջները Աբգարեան վարժարաններուն մէջ կը տեղաւորէ: Վերոյիշեալ շէնքերէն մէկը, իբրեւ հիւանդանոց եւ միւս ապաստանարան կը գործածէ:

9 օր ետք տեղի ունեցող երկրորդ ջարդին, այդ երկու շէնքերն ալ զինուորներու կողմէ կրակի կը տրուին եւ կը հրկիզուին:

Այս ահռելի իրավիճակը կը շարունակուի մինչեւ Ապրիլի 13-ը: Վերջուստ կառավարական պաշտօնատան կից, ի պատիւ սահմանադրութեան հռչակման կանգնուած Յաղթական Կամարն ալ քանդել է բռնապետութեան մէկ յաղթանակը տօնելէ ետք, քրիստոնեաները իրենց հաւաքած վայրերէն ազատ կ'արձակեն: Սակայն այդ խեղճ ու անպաշտպան ժողովուրդը երբ քաղաք կը մտնէ եւ իր աչքերով կը տեսնէ իր տուններուն եւ եկեղեցիներու բոցերու ճարակ ըլլալը, կը յուսահատի եւ կ'ապաստանի քաղաքի արեւմտեան կողմը, յոյն Ռիփիանի Եղբարաց մեծ գործարանին մէջ եւ երկաթուղիի կայարանին կից արտերուն մէջ:

Այս հսկայ բազմութիւնը, քաղաքին մէկ կողմէն միւսը երթալու պահուն, թուրքերը ճամբաներու երկու կողմերը շարուած զանոնք կը պախարակէին նախատիքներով, հայիոյանքներով եւ ծաղրանքներով: Այսպիսով այդ խեղճ ժողովուրդը կը հասնի իր վախճանին:

Չարդուած ժողովուրդը տասը տարբեր նահանգներու կը պատկանէր եւ այդ պատճառաւ Ատանայի աղետը մեր երկրին մէկ մեծ մասին վրայ ազդեց եւ վնաս հասցուց: Մասնաւորապէս այն պատճառաւ, որ այս աղետին պատահած ժամանակը գարուն էր եւ երկրին տարբեր կողմէ հազարաւոր աղքատ մշակներ եւ գործաւորներ քանի մը դահեկան շահելու համար Ատանայի դաշտերը թափուած էին: Ներկայիս այդ դաշտերը մեր նախնիքներուն անանուն գերեզմաններն են:

Սակայն անընդունելի է առանց պատճառի բռնութեան ու նախատիքի ենթարկուիլ եւ դեռ անոնց համբերել...:

Քաղեց՝  
**ՊԵՐՏ ՍԱՎԵՆՍ**  
(Մոնթեալ, 2009)

|  |  |   |  |  |   |   |   |  |  |   |  |  |   |  |  |   |  |  |   |   |  |   |  |  |  |  |   |   |  |  |  |  |  |   |   |   |   |  |  |  |  |  |   |  |   |   |   |  |  |  |   |  |   |  |  |   |  |   |  |  |  |  |  |   |
|--|--|---|--|--|---|---|---|--|--|---|--|--|---|--|--|---|--|--|---|---|--|---|--|--|--|--|---|---|--|--|--|--|--|---|---|---|---|--|--|--|--|--|---|--|---|---|---|--|--|--|---|--|---|--|--|---|--|---|--|--|--|--|--|---|
| <b>ՊԱՅՈՒՄԾ ԲԱՌ</b>                           | <p>ԱՎՈՒՄԲ<br/>ԱՆԿԱՆ<br/>ԱՆԵՂԾ<br/>ԱՆՈՐՈՇ<br/>ԱՊՐՈՒՍՏ<br/>ԱՌԳԻՆ (2)<br/>ԱՐԳԱՀԱՏԱՆԲ<br/>ԱՐԳԵԼԱՐՇԱԻ<br/>ԱՐՇԱԼԱՅՅ</p> <p>ԳԱՅԵԱԿ<br/>ԳԱՇՈՅՆ<br/>ԳԵՂԱՆԻ<br/>ԳԵՐԱՆՈՒՆ<br/>ԳԻՒՐԻՆ<br/>ԳՊՐՈՑԱԿԱՆ<br/>ԳՐԱԽՏ</p> <p>ԵՁԱԿԻ<br/>ԵՂԵՐԵՐԳ<br/>ԵՄԱԿ<br/>ԵՊԵՐԵԼԻ<br/>ԵՐԱՆԵԼ<br/>ԵՐԱՍԱՆ<br/>ԵՐԳԱՐԱՆ<br/>ԵՐԵՒԱԿ</p> <p>ԻՄԱՍԱՍԱՆԷՐ</p> | <p>ԻՆՔՆԱԿԵՐՏ<br/>ԻՐԱՆ (2)<br/>ԻՐԱՏԵՍ<br/>ԻՐԱՒԱՑԻ</p> <p>ՀԱՄԲԱԿ<br/>ՀԱՍՏՈՑ<br/>ՀԱՒԱՏԲ<br/>ՀՆԱՐԵԼ<br/>ՀՈՂԱՏԷՐ<br/>ՀՐԱՍԱՐԱԿՈՒՄ<br/>ՀՐԱԻՐԱԳԻՐ</p> <p>ՄԱՆԿԱՄԻՏ<br/>ՄԱՍՆԻԿ<br/>ՄԻՆԱԿ<br/>ՄԻՈՒԹԻՆ</p> <p>ՅԱԿԻԹ<br/>ՅԱՅՍԱՐԱՐՈՒԹԻՆ<br/>ՅՂԱՆԱԼ<br/>ՅՈՅՍ<br/>ՅՈՐԳՈՐ<br/>ՅՍԱԿԱՏԵՍ</p> <p>ՈԼՈՐՏ<br/>ՈՂՈՐԿ<br/>ՈՍԱՂ</p> | <p>ՈՐԵԱՐ (2)<br/>ՈՐԹԱՏՈՒՆԿ<br/>ՈՐՈՃԱԼ<br/>ՈՐՈՎՀԵՏԵԻ<br/>ՈՐՈՏՈՒՄ</p> <p>ՈՒԽՏԱԳԱՑՈՒԹԻՆ<br/>ՈՒՂԵՇ<br/>ՈՒՂԻՆԱԶՆՍ<br/>ՈՒՂՂԱԶՅԵԱՑ<br/>ՈՒՆԵԼԻ<br/>ՈՒՏԵՍՍ</p> <p>ՍԱԼՈՐ<br/>ՍԱԿԱՐԱՆ<br/>ՍԱՆՏՐ (2)<br/>ՍԱՌՅՑ<br/>ՍԱՍԱՐ (2)<br/>ՍԵՐԻԼ</p> <p>ՏԱՐԵՑ<br/>ՏԱՐՏԱՄ<br/>ՏՆԱՆԿ<br/>ՏՆՏԵՍ<br/>ՏՈՀՄ<br/>ՏՈՒՅՏԻԼ<br/>ՏՏՈՒՆ<br/>ՏՐԱԿԱՆ</p> | <p><b>ՄՈՒՏՈՔՈՒ</b></p> <table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr><td>4</td><td>3</td><td>8</td><td></td><td></td><td>2</td></tr> <tr><td></td><td></td><td>9</td><td></td><td></td><td>4</td></tr> <tr><td></td><td></td><td>5</td><td>2</td><td></td><td>7</td></tr> <tr><td></td><td></td><td></td><td></td><td>9</td><td>5</td></tr> <tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td>6</td></tr> <tr><td>2</td><td>1</td><td>6</td><td></td><td></td><td></td></tr> <tr><td></td><td></td><td>9</td><td></td><td>8</td><td>4</td></tr> <tr><td>7</td><td></td><td></td><td></td><td>4</td><td></td></tr> <tr><td>6</td><td></td><td></td><td>2</td><td></td><td>1</td></tr> <tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td>3</td></tr> </table> | 4 | 3 | 8 |  |  | 2 |  |  | 9 |  |  | 4 |  |  | 5 | 2 |  | 7 |  |  |  |  | 9 | 5 |  |  |  |  |  | 6 | 2 | 1 | 6 |  |  |  |  |  | 9 |  | 8 | 4 | 7 |  |  |  | 4 |  | 6 |  |  | 2 |  | 1 |  |  |  |  |  | 3 |
| 4  | 3  | 8   |  |  | 2 |   |   |  |  |   |  |  |   |  |  |   |  |  |   |   |  |   |  |  |  |  |   |   |  |  |  |  |  |   |   |   |   |  |  |  |  |  |   |  |   |   |   |  |  |  |   |  |   |  |  |   |  |   |  |  |  |  |  |   |
|  |  | 9   |  |  | 4 |   |   |  |  |   |  |  |   |  |  |   |  |  |   |   |  |   |  |  |  |  |   |   |  |  |  |  |  |   |   |   |   |  |  |  |  |  |   |  |   |   |   |  |  |  |   |  |   |  |  |   |  |   |  |  |  |  |  |   |
|  |  | 5   | 2  |  | 7 |   |   |  |  |   |  |  |   |  |  |   |  |  |   |   |  |   |  |  |  |  |   |   |  |  |  |  |  |   |   |   |   |  |  |  |  |  |   |  |   |   |   |  |  |  |   |  |   |  |  |   |  |   |  |  |  |  |  |   |
|  |  |   |  | 9  | 5 |   |   |  |  |   |  |  |   |  |  |   |  |  |   |   |  |   |  |  |  |  |   |   |  |  |  |  |  |   |   |   |   |  |  |  |  |  |   |  |   |   |   |  |  |  |   |  |   |  |  |   |  |   |  |  |  |  |  |   |
|  |  |   |  |  | 6 |   |   |  |  |   |  |  |   |  |  |   |  |  |   |   |  |   |  |  |  |  |   |   |  |  |  |  |  |   |   |   |   |  |  |  |  |  |   |  |   |   |   |  |  |  |   |  |   |  |  |   |  |   |  |  |  |  |  |   |
| 2  | 1  | 6   |  |  |   |   |   |  |  |   |  |  |   |  |  |   |  |  |   |   |  |   |  |  |  |  |   |   |  |  |  |  |  |   |   |   |   |  |  |  |  |  |   |  |   |   |   |  |  |  |   |  |   |  |  |   |  |   |  |  |  |  |  |   |
|  |  | 9   |  | 8  | 4 |   |   |  |  |   |  |  |   |  |  |   |  |  |   |   |  |   |  |  |  |  |   |   |  |  |  |  |  |   |   |   |   |  |  |  |  |  |   |  |   |   |   |  |  |  |   |  |   |  |  |   |  |   |  |  |  |  |  |   |
| 7  |  |   |  | 4  |   |   |   |  |  |   |  |  |   |  |  |   |  |  |   |   |  |   |  |  |  |  |   |   |  |  |  |  |  |   |   |   |   |  |  |  |  |  |   |  |   |   |   |  |  |  |   |  |   |  |  |   |  |   |  |  |  |  |  |   |
| 6  |  |   | 2  |  | 1 |   |   |  |  |   |  |  |   |  |  |   |  |  |   |   |  |   |  |  |  |  |   |   |  |  |  |  |  |   |   |   |   |  |  |  |  |  |   |  |   |   |   |  |  |  |   |  |   |  |  |   |  |   |  |  |  |  |  |   |
|  |  |   |  |  | 3 |   |   |  |  |   |  |  |   |  |  |   |  |  |   |   |  |   |  |  |  |  |   |   |  |  |  |  |  |   |   |   |   |  |  |  |  |  |   |  |   |   |   |  |  |  |   |  |   |  |  |   |  |   |  |  |  |  |  |   |
| <b>Պահուած բառը՝ ԵՐԷՆԵՐՈՒ ԹԱԿԱՐԳ (6 տառ)</b> |  |   |  |  |   |   |   |  |  |   |  |  |   |  |  |   |  |  |   |   |  |   |  |  |  |  |   |   |  |  |  |  |  |   |   |   |   |  |  |  |  |  |   |  |   |   |   |  |  |  |   |  |   |  |  |   |  |   |  |  |  |  |  |   |
| <b>Նախորդին պատասխանը՝ ՊԱՅԼԱՆԿ</b>           |  |   |  |  |   |   |   |  |  |   |  |  |   |  |  |   |  |  |   |   |  |   |  |  |  |  |   |   |  |  |  |  |  |   |   |   |   |  |  |  |  |  |   |  |   |   |   |  |  |  |   |  |   |  |  |   |  |   |  |  |  |  |  |   |

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիմակներով (9x9) կազմուած գծագանցը բաղկացած է իւրաքանչիւր 9 քառակուսի հաշուող 9 բաժինների (3x3): Իւրաքանչիւր բաժնակուսիի մէջ թուանշան մը գետնելէ պակաս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիմակ ունենայ 1-էն 9 թուանշանները իւրաքանչիւր թուանշան մէկ ԱՆԳՍՏ գործածել: Սկսելու համար կարգ